ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի. գ. դ., պրոֆեսոր Դավթյան Անի Համլետի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

I. Դասընթացի անոտացիա

« **Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները** » **դասընթացը**՝ իրավաբանական ֆակուլտետների մագիստրատուրայի, ուսումնական ծրագրերին համապատասխան, պարտադիր ուսուցման հատուկ դասընթացներից է:

Այն հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել արդարադատության տեսակներից՝ քաղաքացիական գործերով արդարադատության, նրա իրականացման փուլերի, քաղաքացիական գործերի առանձին տեսակների, քաղաքացիական դատավարության սկզբունքների, ներկայացուցչության, ընդդատության ինստիտուտները, ապացույցները, հայցի ուսումունքն ու նրա տեսակները, դատարանում գործին մասնակցող անձանց դատավարական պաշտպանության միջոցները, դատական ակտերի բողոքարկման և դասընթացում ներառված այլ մասնագիտական հարցեր:

Ուշագրավ է, որ «**Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները** » դասընթացի ուսումասիրությունն իրականացվում է քաղաքացիական դատավարության տարբեր իրավական ինստիտուտների մասին պատմական զարգացման մասին գիտելիքների զուգորդմամբ, որի ընթացքում ուսանողը լիարժեք կերպով տեղեկանում է նաև Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության ոլորտում իրականացված և իրականացվող դատաիրավական բարեփոխումների ժամանակ բազմաթիվ դատաիրավական գործընթացների հետ, գիտելիքների ձեռք բերելով նաև ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքերի՝ պատմական համակարգումների և քաղաքացիական դատավարության գոծող համակարգման, գործող օրենսգրքի ստեղծման և նրա գործածության արդյունավետության մասին:

Բացի դրանից, դասավանդման գործընթացում՝ սեմինար և լաբորատոր գործնական աշխատանքների ընթացքում, պարտադիր է դառնում քաղաքացիական գործերով դատավարական փաստաթղթերի կազմումը և ՀՀ դատական համակարգի

տարբեր դատարանների քաղաքացիական գործերի՝ դատական դեպքերի, դատական պրակտիկայի հետ ծանոթացումը և վերլուծությունը, դատավարական տարբեր խնդիրների առաջադրումը և դրանց լուծման ուղիներին վերաբերող քննարկումների անցկացումը:

Դաընթացը միաժամանակ ենթադրում է նաև քաղաքացիական դատավարության ոլորտում օրենդրական փոփոխությունների և լրացումների հետ ծանոթացումն ու անհրաժեշտ բանավեճերը:

II. Դասընթացի նպատակը և խնդիրները.

«Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները» դասընթացի նպատակն է իրավաբանական ֆակուլտետների մագիստրատուրայի բաժնի ուսանողներին առավելագույն տեսագործնական գիտելիքների հաղորդումը՝ քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման և նրա դատավարական գործընթացների մասին և ուսանողների շրջանում համապատասխան մասնագիտական գիտելիքների ձևավորումը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողին քաղաքացիական դատավարության և քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման և նրա առանձին ինստիտուտների հիմնախնդիրների մասին մասնագիտական գիտելիքների փոխանցումը.
- ուսանողների մոտ դատավարական մտածողության և դատավարական կողմնորոշման ձևավորումը:

III. Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը՝ քաղաքացիական դատավարության արդի տեսապրակտիկ հիմնախնդիրներն են և այն դատավարական իրավահարաբերությունները, որոնք առաջանում եմ քաղաքացիական գործեր քննող դատարաններում տարաբնույթ քաղաքացիական գործերով՝ հայցային վարույթի, հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի շրջանակներում և այդ գործերով դատական ակտերի բողոքարկման առնչությամբ վերադաս դատական ատյաններում:

Դասընթացի առարկան է՝ դասընթացի առարկան կազմող տարրերն են հանդիսանում՝ քաղաքացիական դատավարության իրավունքը, քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները, քաղաքացիական դատավարության իրավունքը կազմող նորմատիվ իրավական ակտերը, քաղաքացիական իրավունքի իրացումը քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի ընթացքում, քաղաքացիական դատավարության տեսական հասկացությունները և ժամանակակից հայեցակարգերը:

IV. Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի ուսումնասիրման մուտքային պահանջներն են՝ ուսանողների մոտ իրավագիտության ոլորտում անհրաժեշտ ընդհանուր մասնագիտական գիտելիքների առկայությունը, մասնավորապես, պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, քաղաքացիական իրավունքի իմացությունը, քաղաքացիական դատավարության իրավունքի իմացությունը:

V. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է իմանան՝**

- Քաղաքացիական դատավարության իրավունքի հիմնական ինստիտուտներն վերաբերող օրենսդրական փոփոխությունները, տեսապրակտիկ հիմնախնդիրները, քաղաքացիական դատավարության ընթացակարգն ու նրա բոլոր փուլերն ու ենթափուլերը:

Կարողանան՝

- Կողնորոշվել քաղաքացիական գործերով արդարադատության գործընթացներում, քաղաքացիական գործերով վարույթի տեսակներում, դատական ակտերի բողոքարկման գործընթացներում, ապացուցման գործընթացում և ապացույների տեսակներում:

Ունակ լինեն՝

- Վերլուծել գործնական դատավարական խնդիրներ.
- կատարել տարբեր տեսական ուսումնասիրություններ քաղաքացիական դատավարություն դասընթացից.
- Հասկանալ և քննարկել տվյալ ոլորտում օրենսդրական փոփոխությունները:

VI. Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը ՈԱՇ-ի վերջնարդյուներին:

Գիտելիք և իմացություն՝

- Քաղաքացիական դատավարության՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության դատական ձևի և նրա առանձնահատկությունների իմացությունը.

- Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ իրավական ակտերում դատավարական իրավադրույթների իմացությունը.
- Քաղաքացիալան դատավարության փուլերի իմացությունը.
- Քաղաքացիական գործերի քննության տեսակների և նրանց քննության առանձնահատկությունների իմացությունը.
- Դատական ակտերի բողոքարկման ընթացակարգի մասին իմացությունը.
- Իրավակիրառման ՝ դատական գործերով իրավաբանական փաստերի վերլուծության, դատավարական նորմերի մեկնաբանման, դատավարական կոլիզիաները լուծելու կանոնների իմացություն.

Հմտությունները ՝

- **Գիտելիքների կիրառման հմտությունները՝**

  - Կարող է կիրառել քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները իրավաբանական պրակտիկայի տարբեր ոլորտներում:
  - Կարող է կիրառել դատական պրակտիկան և դատական նախադեպերը նույնանման քաղաքացիական գործերով:
  - Կարող է կիրառել ձեռք բերված գիտելիքները օրենսդրական փոփոխությունների վերաբերող գործընթացներին և իրավաստեղծ աշխատանքներին:
  - Կարող է կիրառել ձեռք բերված գիտելիքները տեսական և գիտաուսումնական աշխատանքներում և ծրագրերում:

- **Ընդհանրական իմացական հմտությունները՝**

  - Դատավական խնդիրների լուծման հմտություն:

- ❖ Քաղաքացիական դատավարության նորմերի վերլուծության հմտություն:
- ❖ Դատավարական օրենսդրության մեկնաբանման հմտություն:
- ❖ Դատավարական փաստաթղթեր կազմման հմտություն:
- ❖ Գիտակրթական ուսումնասիրությունների իրականացման հմտություն:

Կարողությունները (կոմպետենցիաները)՝

- Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

  - ❖ Ունակ է ինքնուրույն հասկանալ և մեկնաբանել քաղաքացիական դատավարության օրենսդրությունը և նրա առանձին ինստիտուտներին վերաբերող դրույթները:
  - ❖ Ունակ է մասնակցել պրակտիկայում քաղաքացիադատավարական գործընթացներին, կատարել դատավարական հանձնարարություններ, կազմել դատավարական փաստաթղթեր:
  - ❖ Ունակ է կատարել և մասնակցել տվյալ ոլորտում տեսական, գիտական ուսումնասիրություններին և իրավաստեղծ աշխատանքներին, օրնսդրական նախագծերի ստեղծմանը:

VII. Դասավանդման եղանակները և մեթոդները :

Առարկայի դասավանդումն իրականացվում է հետևյալ մեթոդներով՝ դասախոսությունների, գործնական պարապունքների, դատախաղերի, լաբորատոր աշխատանքների, քննարկումների, անհատական և ինքնուրույն աշխատանքների միջոցով:

Սեմինար պարապմուքների անցկացումը կոնկրետ թեմաների վերաբերյալ, որի ժամանակ ուսանողների պետք է ելույթներ ունենան նախապես հանձնարարված թեմաների հարցերի շուջ հանդիսանում է նրանց գիտելիքների ստուգման հիմնական ձևերից մեկը:

Դատավարական տարբեր խնդիրների լուծումը և օրենսդրական փոփոխություններին վերաբերող նախագծերի քննարկումը գործնական պարապմունքների ժամանակ գիտելիքների ստուգման հաջողված մեթոդներից ևս մեկն է:

Լաբորատոր պարապմունքների անցակումը դատավարական տարբեր փաստաթղթերի կազմելու հմտություններ ձեռք բերելու համար, նպաստում է ուսանողների մոտ գիտելիքների հարստացմանը:

Բացի դրանից դասավանդման անհրաժեշտ մեթոդներից է նաև ՀՀ դատական համակարգի տարբեր դատարանների քաղաքացիական գործերի՝ դատական դեպքերի, դատական պրակտիկայի հետ ծանոթացումը, վերլուծությունը և խմբային քննարկումենները:

Գիտելիքների ստուգման հիմնական ձևերից է մոդուլների կամ ընթացիկ ստուգումների անցկացումը, ստուգարքը և քննությունը, որոնց ժամանակ հնարավոր գիտելիքների ստուգման մեթոդներից է թեսթավորումը կամ երկու - երեք մասնագիտական հարցի առաջադրումը ուսանողին, որի պատասխանից կախված է նրա գնահատման արդյունքը:

Գործնական պարապմունքների ժամանակ կարևոր է նաև հետաքրքիր մասնագիտական թեմաներից՝ զեկուցումների և ռեֆերատների հանձնարարումը ուսանողներին և դրանց քննարկումը սեմինար կամ լաբորատոր պարապմուքների ժամանակ:

Գիտելիքների ամրապանդման, հմտությունների ձեռք բերման և դոսևորման ձևերից է նաև դատախաղերի անցկացումը՝ այդ նպատակի համար հատկացված բուհում գործող դատարանի դահլիճը:

VIII. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է « 4 » ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ), որից 16 ժամը նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել ուսումնական տարվա 1 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**85**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	
1.2.2.Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Քննություն**

IX. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**

Թեմա 1 . Քաղաքացիական դատավարության օրենսդրության ստեղծման և զարգացման պատմությունը Հայաստանում:	4=2+2	2	2
Թեմա 2. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրների արդի զարգացումները:	4=2+2	2	2
Թեմա 3. Քաղաքացիական դատավարության սկզբունքների զարգացումներն ու արդի համակարգը:	4=2+2	2	2
Թեմա 4. Վարույթի տեսակները քաղաքացիական դատավարությունում և դրանց կատարելագործման օրենսդրական ուղիները:	4=2+2	2	2
Թեմա 5. Դատական ապացուցման տեսությունը և նրա օրենսդրական զարգացումները:	4=2+2	2	2
Թեմա 6. Դատական ենթակայության և ընդդատության	4=2+2	2	2
Թեմա 7. Քաղաքացիական դատավարության փուլերի մասին ժամանակակից տեսությունը:	4=2+2	2	2

Թեմա 8. Դատավարության պարզեցված ընթացակարգերը:	3=2+1	1	1
Թեմա 9. Քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման էությունն ու արդի զարգացումները:	3=2+1	1	1
Ընդամենը	32	16	16

X. Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Քաղաքացիական դատավարության օրենսդրության ստեղծման և զարգացման պատմությունը Հայաստանում

Դատական իրավունքի պատմական աղբյուրների ձևավորումը Հայաստանում: Խորհրդային և հետխորհրդային շրջանի քաղաքացիական դատավարության օրենսդրության համակարգումները՝ կոդիֆիկացիաները:

Թեմա 2. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրների արդի զարգացումները

Ներպետական և միջազգային իրավունքի աղբյուրներ: Դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր:

Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրների զարգացման օրինաչափությունները և արդի հայեցակարգը:

Թեմա 3. Քաղաքացիական դատավարության սկզբունքների զարգացումներն ու արդի համակարգը

Ներածություն քաղաքացիական դատավարության սկզբունքների տեսության մասին: Քաղաքացիական դատավարության իրավունքի ընդհանուր դատավարական (սահմանադրական) սկզբունքները:
Քաղաքացիական դատավարության ճյուղային սկզբունքները:

Թեմա 4. Վարույթի տեսակները քաղաքացիական դատավարությունում և դրանց կատարելագործման օրենսդրական ուղիները

Քաղաքացիական գործերով վարույթի տեսակները և դրանց զարգացման օրինաչափությունները: Հայցերի տեսակների մասին ուսումունքը և նրա օրենսդրական զարգացումները հայցային և հատուկ հայցային վարույթներում:

Թեմա 5. Դատական ապացուցման տեսությունը և նրա օրենսդրական զարգացումները

Դատական ապացուցումը և դատական ապացուցման փուլերը: Դատական ապացուցման ընդհանուր կանոնները: Դատական ապացույցների հասկացությունը և դասակարգումը: Ապացույցների առանձին տեսակների իրավական բնութագիրը օրենսդրական զարգացումներում: Վկայի ցուցմունքը: Գրավոր ապացույցները: Իրեղեն ապացույցները: Լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություն-ները, տեսագրությունները: Փորձագետի եզրակացությունը: Մասնագետի բացատությունը:

Ապացույցների ապահովումը քաղաքացիական դատավարությունում:

Թեմա 6. Դատական ենթակայության և ընդդատության

Դատական ենթակայության և ընդդատության ինստիտուտների օրենսդրական և դատավարագիտական զարգացումները: Ընդդատության և նրա տեսակների դատավարագիտական վերլուծությունը: Կոլիզիոն ընդդատություն և կոլիզիոն դատական ենթակայություն: Իրավական խնդիրներ և լուծումներ:

Թեմա 7. Քաղաքացիական դատավարության փուլերի մասին ժամանակակից տեսությունը:

Քաղաքացիական դատավարության փուլերի մասին տեսությունը և արդի զարգացումները քաղաքացիական գործերով դատաքննության և դատավարության մեջ:

Թեմա 8. Դատավարության պարզեցված ընթացակարգերը

Քաղաքացիական դատավարության այլ տեսակները: Պարզեցված ընթացակարգեր: Հեռակա դատաքննության, արագացված դատաքննություն, պարզեցված վարույթ, վճարման կարգադրության վարույթ:

Թեմա 9. Քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման էությունն ու արդի զարգացումները

Ներածություն դատական ակտերի բողոքարկման և նրանց տեսակների մասին: Վերաքննիչ վարույթի և վերաքննիչ բողոքարկման իրավունքի պատմական զարգացումները Հայաստանում:

Վերաքննիչ դատաքննությունը և նրա արդի զարգացման ուղիները : Վճռաբեկ դատաքննությունը և նրա արդի զարգացումները :

Դատական ակտերի բողոքարկումը նոր և նոր երևան եկած հանգամանքներով:

Գրականություն ըստ թեմաների

Թեմա 1 -2

Քաղաքացիական դատավարության օրենսդրության ստեղծման և զարգացման պատմությունը Հայաստանում:
Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրների արդի զարգացումները:

1. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն, ու զարգացման ուղիները, Երևան, 2024: Երևան, 2024:
2. ***Գևորգյան Ս.Վ.,*** Սովետական քաղաքացիական դատավարություն, Երևան 1972:
3. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները, Երևան, 2024:
4. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007:
5. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012:
6. ***Հակոբյան Ս.Ս.,*** Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. պատմատեսական և իրավական վերլուծություն: Թեկն.ատենախոս. սեղմ., Երևան., 2018:
7. ***Воронцова И. В.*** Нормы международного права как источник гражданского процессуального права. Автореф.докт.дисс .М., 2015.
8. ***Гражданский процесс зарубежных стран.*** Под ред. А.Г. Давтян, М., 2008.
9. ***Давид Р.,*** Жоффре-Спинози К. Основные правовые системы современности. М., 2019.
10. **Давтян А.Г.** Гражданский процесс в Германии и странах СНГ. М., 2000.С.176-182.
11. ***Давтян А. Г.*** Гражданский процесс Республики Армения: тенденции развития и пути совершенствования. Сборник нучных статей международной конференции. Саратов, 2012. С. 132- 135.

12. ***Давтян А.Г.,*** Гражданское процессуальное право Германии (основные институты), Автореф. докт.дисс., Ереван, 2002. С. 20.
13. ***Давтян А.Г.*** Гражданское процессуальное право Германии. М., 2002.С.34.
14. ***Давтян А.Г.*** Эволюция источников гражданского процессуального права Республики Армения. Вопросы теории и практики. Сборник статей восьмой годичной научной конференции РАУ, 2014, Ереван, с. 104-110.
15. ***Елисеев Н.Г.*** Гражданское процессуальное право зарубежных стран.- М., 2006.
16. ***Марченко М.Н.*** Судебное правотворчество и судебное право. М.,2008. С.84.
17. ***Марченко М.Н.*** Сравнительное правоведение. Общая часть. М., 2001. Гл. VI, VII.
18. ***Решетникова И.В.*** Доказательственное право Англии и США.- М., 2021.
19. ***Удалов Д. Э.***Источники процессуального права (обшетеорет. аспект), Автореф. канд. наук, М., 2010.
20. ***Чайкина А.В.*** Источники гражданского процессуального права. Автореф. дисс. канд. наук. М., 2021.
21. **Юридический энциклопедический словарь.** Москва, 1984.
22. **Josef Karst**. Sempadscher Kodex aus dem 13. Jahr-hunderd oder mittelarmenisches Rechtsbuch, herausgegeben und übersetzt von Josef Karst, erster Band. Text und Übersetzung, Strassburg, 1905, Vorwort.
23. **Josef Karst**, Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert. von Josef Karst, zweiter Band: Kommentar, Strassburg,1905.
24. **Josef Karst**, Grundriss der Geschichte des Armenischen Rechtes, 1. H. Sonderabdruck aus der "Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft", B. XIX, Stuttgart, 1906.
25. **Josef Karst,** Grundriss der Geschichte des armenischen Rechtes, 2. H. Sonderabdruck aus der "Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft", B.XX, Stuttgart, 1907.

Թեմա 3

Քաղաքացիական դատավարության սկզբունքների զարգացումներն ու արդի համակարգը

1. **Դավթյան Ա.Հ.**, **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024: Երևան, 2024:
2. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012:
3. ***Սարգսյան Լ.Վ.,*** Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում: Թեկն. ատենախոս. սեղմ., Երևան, 2022:
4. ***Айрапетян Ю.В.*** Актуальные проблемы доступности правосудия в гражданском процессе. Ереван, 2017.
5. ***Белякова А.В.*** Принцип разумности в системе принципов гражданского процессуального права. Вестник арбитражной практики. N 1, 2014.С. 36;
6. ***Борисова Е.А.*** Концентрация процесса как принцип гражданского (арбитражного) процессуального права. Теоретические проблемы гражданского, арбитражного процесса и исполнительного производства. Сб. научн. ст., Краснодар., 2005.С. 156-172.
7. ***Давтян А.Г.*** Развитие теории принципов в гражданском процессуальном праве РА. В книге: Заметки о современном гражданском и арбитражном процессуальном праве. Москва, 2004. С. 247-256.
8. ***Давтян А.Г.*** Гражданское процессуальное право Германии (основные институты) Автореф. докт. дисс. Ереван, 2000.
9. ***Давтян А.Г.*** Гражданский процесс в Германии и в странах СНГ.Ереван. 2000.
10. ***Давтян А. Г.*** Состязательность правосудия по гражданским делам: проблемы эффективности и пути развития в Республике Армения. Сборник научных статей Седьмой годичной коференции Российско- Армянского (Славянского) университета . Ереван, 2013. С. 22-27.

11. ***Давтян А.Г.*** Историко-юридический, судоустройственный и современные аспекты гарантий независимости судов и судей в концепциях современной гражданской процессуальной теории и контексте развития гражданского процесуального законодательства Республики Армения. Вестник РАУ, N3/2022 (серия: гуманитарные и общественные науки) С. 137-149.
12. ***Шерстюк В.М.*** Право быть выслушанным и услышанным – принцип гражданского процессуального права. В книге: Заметки о современном гражданском и арбитражном процессуальном праве. М, 2004., С. 57- 63.
13. ***Endemann,*** Im Spannungsfeld - Persönlichkeitsrecht und Öffentlichkeit des verwaltungsgerichtlichen Verfahrens in FS für Wolfgang Zeidler, Berlin, New York, 1987, S.409;
14. ***Kissel,*** Gerichtsverfassungsgesetz, Kommentar, 2. Aufl. München, 1994,§ 169, Rdn.4.

Թեմա 4

Վարույթի տեսակները քաղաքացիական դատավարությունում և դրանց կատարելագործման օրենսդրական ուղիները

15. **Դավթյան Ա.Հ.**, **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024:
1. ***Դավթյան Ա.Հ.,*** Վարույթի տեսակները ՀՀ քաղաքացիական դատավարությունում և դրանց կատարելագործման արդի հայեցակարգերը դատահիրավական բարեփոխումների փուլում: «Նոր Գլաձորը» գիտության բավիղներում գրքում: Գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, 2013, էջ 85-95:
2. **Аболонин Г.О.** Групповые иски. М. 2001.
3. ***Гражданский процесс.*** Отв. ред. Ярков В.В. М., 2022.
4. ***Гражданский процесс.*** Под ред. Треушникова М.К. М., 2021.
5. **Осокина Г.Л.** Иск (теория и практика). М., 2000.

6. ***Решетникова И.В., Ярков В.В.*** Гражданское право и гражданский процесс в современной России.М.,1999.

Թեմա 5

Դատական ապացուցման տեսությունը և նրա օրենսդրական զարգացումները

16. **Դավթյան Ա.Հ.**, **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024:
17. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012:
18. ***Զորաբյան Ա.,*** Ապացուցման միջոցների հիմնահարցերը ՀՀ Քաղաքացիական դատավարությունում, Թեկն.ատենախ. սեղմ., Երևան, 2013, էջ. 15:
19. ***Մեղրյան Ս.,*** Ապացուցումը և ապացույցները ՀՀ Քաղաքացիական դատավարությունում, Երևան, 2020, էջ. 44:
20. ***Давтян А.Г.*** Аудио - и видеозаписи в гражданском процессуальном праве. Сборник научных статей десятой годичной научной конференции РАУ. Ереван 2016, 122-127.
21. ***Давтян А.Г.*** Экспертиза в гражданском процессе. М., 1995. С.5.
22. ***Гражданское процессуальное право России.*** Под ред. М.С.Шакарян. М., 2002.
23. ***Гражданский процесс.*** Под ред. Яркова В.В.М.,2004.
24. ***Гражданский процесс.*** Под ред. Л.В. Тумановой, Н.Д. Амаглобели. М., 2015.
25. ***Курылев С.В.*** Основы теории доказывания в советском правосудии. Минск, 1969. С.177 -179.
26. ***Кочеткова Е.А.*** Об использовании электронных доказательств в цивилистическом процессе. Вестник ВГУ, Серия право, N 3, 2020.2
27. **Медведев И.Г.,** Письменные доказательства в гражданском процессе России и Франции. Автореф. канд.дисс. Екатеринбург, 2003. С.16.

28. ***Решетникова И.В.*** Курс доказательственного права в российском гражданском судопроизводстве. М., 2000.
29. ***Сахнова Т.В.*** Судебная экспертиза.М., 1999.
30. ***Треушников М.К.*** Судебные доказательства. М., 2021.
31. ***Хмыров А.А.*** Теория доказывания. Краснодар, 2006. С. 12-19.
32. ***Шкурова П.Д.*** Письменные доказательства в гражданском и административном судопроизводстве. Автореф. канд.,дисс. М., 2019.

Թեմա 6.

Դատական ենթակայության և ընդդատության

1. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024:
2. ***Դավթյան Ա.Հ.*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012:
3. ***Թադևոսյան Լ., Վարդանյան Ա.*** ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործերի ենթակայության և ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման լիազորության իրականացման հիմնախնդիրները, Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր 9-10 (267-268), Երևան, 2021, էջ 3-19:
4. **Гражданский процесс. Под ред. Яркова В.В.**, Москва, 2023. Гл.7. Подсудность и подведомственность гражданских дел.С.156-177.
5. **Плотников Д.А.** Коллизии между общими и специальными гражданскими процессуальными нормами как предпосылка совершенствования системы гражданского процессуального права. Электронное приложение к российскому юридическому журналу, N2, 2022.

Թեմա 7

Քաղաքացիական դատավարության փուլերի մասին ժամանակակից տեսությունը:

1. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024: Երևան, 2024:

2. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն: Ուսում. ձեռն., Երևան, 2012, գլուխ 20, էջ 176-196:
3. ***Թադևոսյան Լ.*** Դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ամրապնդման հիմնահարցերը, Դատական իշխանություն, գիտամեթոդական ամսագիր, 4-6 (274-276), Երևան, 2022:
4. ***Հովհաննիսյան Վ.Վ.,*** Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2013:
5. ***Ղամբարյան Ա.,*** Դատական ակտերի բողոքարկումը ժամանակակից քրեական դատավարությունում, Երևան 2017, գլուխ 1, էջ 16-26:
6. ***Борисова Е.А.*** Апелляция в гражданском и (арбитражном процессе), М., 2008.
7. ***Гражданский процесс хрестоматия.*** *Под ред. М.К.Треушникова.* М.,2005.
8. ***Давтян А.Г.*** Особенности судебной системы и законодательства о судоустройстве европейских стран. Закон и реальность. Ереван, 2010, # 7(177).
9. ***Тунян А.Г.,*** Проверка судебных постановлений в гражданском процессе государств-участников СНГ – Раздел «Армения». В монографии: Проверка судебных постановлений в гражданском процессе стран ЕС и СНГ. Под.ред. Борисовой Е.А., Москва, 2012., 2-е изд. С. 477-507.

Թեմա 8

Դատավարության պարզեցված ընթացակարգերը

1. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զրգացման ուղիները, Երևան, 2024:
2. ***Դավթյան Ա.Հ.*** Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012:
3. ***Հովհաննիսյան Վ. Վ.*** Վերաքննիչ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հստակեցումը և վերաքննության տեսակի օբյեկտային սահմանների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2016, էջ 167:
4. ***Հովհաննիսյան Վ. Վ.,***Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայստանում, Երևան, 2013:
5. ***Մեղրյան Ս.Գ.*** Պարզեցված ընթացակարգերը Հայայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Երևան, 2020:
6. ***Մեղրյան Ս.Գ.*** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևան, 2010:
7. ***Давтян А.Г.*** Гражданское процессуальное право Германии. Москва, 2000.
8. ***Давтян А.Г.*** Гражданский процесс в Германии и странах СНГ. Ереван, 2000.

Թեմա 9

Քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման էությունն ու արդի զարգացումները

1. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն. արդի հիմնախնդիրներն ու զրգացման ուղիները, Երևան, 2024:

2. ***Դավթյան Ա.Հ.,*** Քաղաքացիական դատավարություն: Ուսում. ձեռն., Երևան, 2012, գլուխ 20, էջ 176-196:
3. ***Թադևոսյան Լ.*** Դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ամրապնդման հիմնահարցերը, Դատական իշխանություն, գիտամեթոդական ամսագիր, 4-6 (274-276), Երևան, 2022:
4. ***Հովհաննիսյան Վ.Վ.,*** Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2013:
5. ***Борисова Е.А.*** Апелляция в гражданском и (арбитражном процессе), М., 2008.
6. ***Гражданский процесс хрестоматия.*** *Под ред. М.К.Треушникова.* М.,2005.
7. ***Давтян А.Г.*** Особенности судебной системы и законодательства о судоустройстве европейских стран. Закон и реальность. Ереван, 2010, # 7(177).
8. ***Тунян А.Г.,*** Проверка судебных постановлений в гражданском процессе государств-участников СНГ – Раздел «Армения». В монографии: Проверка судебных постановлений в гражданском процессе стран ЕС и СНГ. Под.ред. Борисовой Е.А., Москва, 2012., 2-е изд. С. 477-507.

Դատական պրակտիկա

Բոլոր թեմաների համար

1. ***ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի***, Երևան, 2006 (սեպտեմբեր-դեկտեմբեր), հատ. I:
2. ***ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում*** (17. 06. 2022): Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4095/02/19 մասին: https://www.cassationcourt.am/decisions/
3. ***ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում*** (20.05.2022): Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/ ԵԴ/17352/02/18-ի մասին: https://www.cassationcourt.am/decisions/
4. ***ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում*** (25.01.2023): Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25649/02/20 մասին: https://www.cassationcourt.am/decisions/

5. ***ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում*** (10.06.2022): Քաղաքացիական թիվ ԱՎԴ2/2912/02/19 մասին: https://www.cassationcourt.am/decisions/
6. **ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը** (28.12.2021) Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/26603/02/18 մասին: https://www.cassationcourt.am/decisions/
7. **ՀՀ Վճռաբեկ դատարանի Քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի**, (Հունվար- դեկտեմբեր) 2020, Հատ. XIV, Երևան:

XI. Քննության հարցաշարի օրինակ:

1. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսդրության համակարգումները (օրենսգրքերը): Ընդհանուր բնութագիրը, հիմնական ինստիտուտները:
2. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները և դրանց օրենսդրական զարգացումները:
3. Դատական նախադեպը որպես քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուր:
4. Քաղաքացիական դատավարության ընդհանուր դատավարական (սահմանադրական) սկզբունքները և դրանց վերաբերյալ տեսական մոտեցումները:
5. Քաղաքացիական գործերով վարույթի տեսակները և դրանց օրենսդրական զարգացումները:
6. Դատական ենթակայություն և ընդդատություն, հասկցությունը, տարբերությունները և օրենսդրական կարգավորումները:
7. Ընդդատության հասկացությունը և տեսակները:
8. Պայմանագրային ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում:
9. Տարածքային ընդդատությունը և նրա տեսակները քաղաքացիական դատավարությունում:
10. Միջազգային ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում:

11. Քաղաքացիական դատավարության ճյուղային սկզբունքները:
12. Քաղաքացիական դատավարության փուլերը և ենթափուլերը: Օրենսդրական զարգացումները:
13. Հեռակա դատաքննությունը որպես քաղաքացիական գործերով պարզեցված ընթացակարգ: Ընդհանուր բնութագիրը և դատավարական նպատակները:
14. Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը որպես քաղաքացիական գործերով պարզեցված ընթացակարգ: Ընդհանուր բնութագիրը և դատավարական նպատակները:
15. Պարզեցված վարույթը որպես քաղաքացիական գործերով պարզեցված ընթացակարգ: Ընդհանուր բնութագիրը և դատավարական նպատակները:
16. Արագացված դատաքննությունը որպես քաղաքացիական գործերով պարզեցված ընթացակարգ: Ընդհանուր բնութագիրը և դատավարական նպատակները:
17. Ապացուցման հասկացությունը և ապացուցման փուլերը քաղաքացիական դատավարության տեսության մեջ:
18. Ապացույների հասկացությունը, դասակարգումը:
19. Փորձագետի եզրակացությունը դատական ապացույցների համակարգում: Դատական փորձաքննությունների տեսակները:
20. Վկայի ցուցմունքը որպես ապացույց քաղաքացիական դատավարությունում, նրա ուսումնասիրման, գնահատման կարգի դատավարական առանձնահատկությունները:
21. Մասնագետի բացատրությունը որպես ապացույց քաղաքացիական դատավարությունում, նրա ուսումնասիրման, գնահատման կարգի դատավարական առանձնահատկությունները:
22. Լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները որպես ապացույց քաղաքացիական դատավարությունում, նրանց ուսումնասիրման, գնահատման կարգի

դատավարական առանձնահատկությունները:

23. Իրեղեն ապացույցները քաղաքացիական դատավարությունում, նրանց ուսումնասիրման, գնահատման կարգի դատավարական առանձնահատկությունները:
24. Գրավոր ապացույցները քաղաքացիական դատավարությունում, նրանց ուսումնասիրման, գնահատման կարգի դատավարական առանձնահատկությունները:
25. Դատարանի դերը դատական ապացուցման մեջ: Ապացուցման առարկան և այն կազմող ապացուցման ենթակա փաստերը:
26. Դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով: Ամբողջական և մասնակի վերաքննություն: Օրենսդրական զարգացումները:
27. Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկության կարգով: Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները: Օրենսդրական զարգացումները:

XII. Քննական տոմսի օրինակ

Քննական տոմս N 1

1. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները և դրանց զարգացման արդի հայեցակարգը դատավարգիտության տեսության մեջ:
2. Ապացույցների առանձին տեսակների իրավական բնութագիրը օրենսդրական զարգացումներում:

Քննական տոմս N 2

1. Քաղաքացիական դատավարության սկզբունքները և դրանց վերաբերյալ տեսական մոտեցումները:
2. Դատական ենթակայության և ընդդատության ինստիտուտների օրենսդրական և դատավարագիտական զարգացումները: